

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՐԿԱԳԱՆՁՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ձ.Շ. Մկրտչյան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ինչպես ներկայումս, այնպես էլ առաջիկա տարիներին, կարևոր նշանակություն և դերակատարում են ձեռք բերում ընդերքի այն ռեսուրսները, որոնք հատկապես արտահանվում են համաշխարհային շուկա և ունեն բարձր արժեք: Ինչպես ցույց է տալիս բազմաթիվ զարգացող երկրների ու Հայաստանի Հանրապետության ընդերքօգտագործող ընկերությունների գործունեության տնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունը և արդյունքների վերլուծությունը, ներկայումս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք այս կամ այն չափով խոչընդոտում են այդ ոլորտում ձևավորված ավելացված արժեքի բաշխմանը՝ ընդերքի սեփականատիրոջ (հանձինս պետության), ընդերքարդյունահանող ընկերությունների և համաշխարհային շուկայում հանքարդյունաբերության արտադրանքը վաճառող ընկերությունների միջև: Հարկանշական է, որ պետությունը, լինելով ընդերքի սեփականատերը, ստանում է ավելացված արժեքի միայն փոքր մասը՝ հարկերի և վճարների տեսքով, իսկ հանքային ռեսուրսի զգալի բաժինը յուրացնում են հանքարդյունաբերական արտադրանքը իրացնող (հիմնականում՝ օֆշորային) կազմակերպությունները:

Հեղինակը փորձ է կատարել մշակել առաջարկություններ պետության և ոլորտում տարբեր տնտեսավարող սուբյեկտների միջև շահերի լավագույն հարաբերակցություն ձևավորելու հարցում:

Բանալի բառեր. հանքարդյունաբերություն, օգտակար հանածո, հանքահումքային արտադրանք, բնապահպանական հարկ, ռոյալթի, բնօգտագործման վճար, հարկազանձում, պետական բյուջե:

Ներածություն

Հանքահումքային ռեսուրսներով հարուստ երկրներում տնտեսական աճի ապահովման հիմնական ուղիներից մեկը օգտակար հանածոների նոր հանքավայրերի տնտեսական շրջանառության մեջ ընդգրկումն է և երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) կառուցվածքում հանքահումքային արտադրանքի բաժնի ավելացումը: Հանքարդյունաբերության ոլորտում վարվող տնտեսական քաղաքականության հիմքում առանձին երկրների կառավարությունների կողմից ընտրվում և կիրառվում է հարկման առանձնահատուկ ռեժիմ, որի նպատակն է ավելացնել ընդերքօգտագործումից ստացվող պետության եկամուտները՝ սոցիալ-տնտեսական, ռազմական և այլ նպատակներով օգտագործելու համար: Հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների հարկման առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշակի եզրակացություններ անել Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկման ռեժիմի, ռոյալթիների հաշվարկման կարգի, ինչպես նաև դրանց կատարելագործման վերաբերյալ:

Հանքարդյունաբերության ոլորտի կարևորությամբ, երկրի ՀՆԱ-ում զգալի բաժին ունենալու, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների նշանակալի ներհոսք ապահովելու ներուժով պայմանավորված (ինչը հատկապես բնորոշ է Հայաստանի Հանրապետությանը) կառավարությունները փորձում են բանակցել մասնավոր հանքարդյունաբերական ընկերությունների հետ՝ խոշոր ներդրումային ծրագրերի հարկման առանձնահատուկ (անհատական) սկզբունքներ սահմանելու համար: Գործնականում ընդունված է, որ այս ոլորտի տնտեսավարող սուբյեկտները պետք է ավելի շատ հարկեր վճարեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք զբաղվում են միջազգային շուկաներում բավականին բարձր արժեք

ունեցող չվերականգնվող ռեսուրսների շահագործմամբ: Այնուամենայնիվ, կան երկրներ, որտեղ հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունները հարկվում են ազգային տնտեսության մյուս ոլորտներում գործող ընկերությունների նման, ինչը, թեև արդարացի չէ, սակայն հեշտացնում է երկրի հարկային օրենսդրությունը և այդպիսով դյուրինացնում հարկային վարչարարությունը:

Հանրային սեփականություն հանդիսացող բնական ռեսուրսներից ստացվող հարկային եկամուտների բաշխումը և օգտագործումը նույնպես հասարակության մեջ սուր բանավեճերի ու քննարկումների առարկա է: Եվ պատահական չէ, որ տնտեսագետներն ու քաղաքական գործիչները քննարկում են բնական պաշարների արդյունահանման և արտահանման դրական ու բացասական ազդեցությունները տնտեսական աճի վրա: Այդպիսի քննարկումները հատկապես թեժ են զարգացող երկրներում, որոնք էլ հիմնականում հումքային բազա (հումքային կցորդ) են հանդիսանում զարգացած երկրների համար: Ինչ վերաբերում է տնտեսական աճին, ապա ներկայիս հրամայականն է այնպիսի աճի ապահովումը, որը համապատասխանում է ներառական տնտեսական աճի [1] հայեցակարգին (այս հիմնախնդիրը հատկապես կարևորվում է ՀՀ-ում՝ ելնելով ստեղծված սոցիալ-տնտեսական և ռազմա-քաղաքական պայմաններից) և ենթադրում է տնտեսական աճի արդյունքների արդարացի (տնտեսապես հիմնավորված) բաշխում ընդերքի սեփականատիրոջ և ընդերքօգտագործողների միջև, ինչը հնարավորություն կընձեռի ավելացնելու նաև ներառական տնտեսական աճի ազդեցությունը հասարակության բոլոր անդամների համար:

Խնդրի դրվածքը

Հանքարդյունաբերության ոլորտի հարկերի ընդհանուր տարրերի նկարագրությունը թույլ է տալիս առանձնացնել ռոյալթիները, եկամտային հարկերը, վարձակալության հարկերն ու գերշահույթի նկատմամբ կիրառվող հարկերը, պահումային հարկերը, պետության մասնաբաժինը հանքարդյունաբերական գործունեությունից, ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), մաքսատուրքերը և վճարի այլ տեսակները [2]:

Բազմաթիվ երկրներում հանքարդյունաբերության ոլորտի հարկման սկզբունքների ձևավորման հիմքում դրված են տարբեր ակնկալիքներ և նպատակներ, որը ենթադրում է նաև հարկային վարչարարության տարբեր եղանակների կիրառում, ինչը թույլ կտա պարզ կամ բարդացված մեթոդաբանությամբ հարկային դրույքաչափերի սահմանումը և արդյունավետ՝ հասկանանք բավարար չափով և ճշգրտությամբ, հարկերի հավաքագրումը կազմակերպելու համար: Հարկման այն համակարգը, որը կարող է լավագույնը լինել մի երկրի համար, մեկ այլ երկրի առանձնահատկություններից, և, առաջին հերթին, ինստիտուտների կայացվածությունից, ելնելով կարող է անարդյունավետ լինել: Բացի այդ, աշխարհի գրեթե բոլոր երկրների կառավարությունները շահագրգռված են հանքարդյունաբերության ոլորտում հնարավորին չափով մեծ ներդրումների ներգրավմամբ, և ներդրումներ կատարելու երկրի ընտրության հիմքում, մյուս գործոնների հետ մեկտեղ, մեծ նշանակություն է տրվում հարկման ռեժիմին և գումարային հարկային բեռին:

Հաշվի առնելով համաշխարհային շուկայում օգտակար հանածոների գների և շահութաբերության շարունակական փոփոխությունը, ինչը պայմանավորված է գործարար ցիկլով, հանքարդյունաբերության ոլորտից գանձվող դրամական միջոցների օգտագործման ձևերից մեկը կարող է լինել առանձին հիմնադրամում (օրինակ՝ կայունացման հմնադրամի օրինակով) դրանք հավաքագրելը: Այս դեպքում, հանքարդյունաբերության հարկերի բարձր դրույքաչափերի ժամանակահատվածում կառավարությունը ձևավորում է այդպիսի հիմնադրամի մուտքերը, իսկ անկման ժամանակահատվածում, երբ հարկային և մյուս մուտքերը բավարար չեն, օգտագործում է հիմնադրամի միջոցները: Նման պրակտիկա կիրառվում կամ կիրառվել է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Զիլին, Նամիբիան, Նորվեգիան, Պապուա-Նոր Գվինեան և մի շարք այլ երկրներ, որտեղ հանքարդյունաբերության ոլորտը նշանակալի դերակատարում ունի երկրի տնտեսական զարգացման գործում: Մեկ այլ հիմնախնդիր է, թե ինչպես է պետք տնօրինել դրամական

միջոցները, որոնք հավաքագրվում են հիմնադրամում: Ներդրումներ կատարելով արտասահմանում, այլ ոչ թե երկրի ներսում, երկրի տնտեսությունը կկարողանա խուսափել այնպիսի անբարենպաստ միկրոտնտեսական ազդեցությունից, որը կարող է առաջացնել հանքարդյունաբերության բում, դրանով իսկ նվազեցնելով հոլանդական հիվանդության առաջացման հեռանկարը [3, p. 14-15]: Մյուս կողմից, ազգային տնտեսությունում արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքներում կատարվող ներդրումները կարող են երկրի հետագա կայուն սոցիալ-տնտեսական զարգացման գրավականը դառնալ: Նման իրավիճակներում երկրների կառավարությունները պետք է նաև որոշում կայացնեն թե ինչպես են երկրի առանձին տարածաշրջաններում (մեզանում՝ մարզերում) հավաքագրված միջոցները բաշխվելու ողջ երկրի մասշտաբով. դրանք պետք է ուղղվեն այն տարածաշրջանների (մարզերի) զարգացման ծրագրերին, որտեղ հավաքագրվել են, թե՛ բաշխվեն մյուս տարածաշրջանների միջև նույնպես՝ ելնելով կառավարության կողմից սահմանված գերակայություններից և առաջնահերթություններից: Պատմականորեն տնտեսության հանքարդյունաբերության ոլորտից ստացված հարկերը կենտրոնացվել և տնօրինվել են կենտրոնական կառավարության կողմից, և ընդհանուր գումարի միայն փոքր մասն է ուղղվել այն տարածաշրջաններ, որտեղից հավաքագրվել են ռեսուրսավճարները: Վերջին տարիներին այդ միտումը աշխարհի մակարդակով փոփոխվում է և միջոցների ավելի մեծ մասն է ուղղվում այն համայնքներին (տարածաշրջաններին), որտեղ շահագործվում են հանքավայրերը, իսկ հավաքագրված միջոցների ծախսման ուղղությունների մեջ ներառվում են և՛ ենթակառուցվածքների շինարարությունը, և՛ սոցիալական նշանակության ծրագրերը, և՛ տվյալ՝ ազդակիր համայնքի բնակչության առողջապահական հիմնախնդիրների լուծումը: Հայաստանում, օրինակ, մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից 2016թ.-ին և 2017թ.-ին վճարված հարկերի աննշան (փոքր) մասն է ուղղվել համապատասխան համայնքային բյուջեներ՝ 2016թ.-ին ընդամենը վճարված հարկերի 0.9%, իսկ 2017թ.-ին՝ 1.0%-ը: Ընդ որում, մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից համայնքային բյուջեների նկատմամբ հաշվարկված հարկերի և վճարումների հիմնական մասն առաջանում է գույքի վարձակալությունից, որոնք կազմել են այդ կազմակերպությունների նկատմամբ հաշվարկված հարկերի 66.1%-ը 2016թ.-ին և 65.6%-ը 2017թ.-ին [4, էջ 39]:

Հետազոտության արդյունքները

Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում ծագող տնտեսա-իրավական կարգավորման բազմաթիվ հիմնախնդիրներ մշտապես գտնվում են այդ ոլորտում պետության կողմից լիազորված մարմինների, հանրության և մասնագիտացված միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում: Այդ հիմնախնդիրները քննարկվում են բազմաթիվ հարթակներում: Մասնավորապես, 2020թ.-ի մարտի 6-8-ին կազմակերպված բազմակողմ քննարկման թեմա են դարձել հետևյալ հարցերը՝

- մետաղական հանքարդյունաբերության ոլորտի հիմնական հարկատեսակները և վճարները, ֆինանսական հոսքերի ձևավորման մեխանիզմները,
- հանքարդյունաբերության ոլորտի ընկերությունների շահութաբերության վրա ազդող գործոնները,
- հանքարդյունահանող ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի վճարման նպատակները և հաշվարկման ու վճարման ռեժիմը,
- հանքարդյունաբերության ոլորտից պետության եկամուտների աճը, դրա վրա ազդող գործոնները,
- տեղական բյուջեներին մասհանումների կատարման, ազդակիր համայնքների ու իրականացվելիք բնապահպանական ու առողջապահական ծրագրերի ընտրության մեթոդաբանությունը,

- շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և ֆինանսական երաշխիքների մեխանիզմների վերանայման հնարավորությունները [5]:

ՀՀ-ում մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունները պետական բյուջե են վճարում ավելացված արժեքի, ակցիզային և բնապահպանական հարկեր, ռոյալթի, մաքսատուրքեր, բնօգտագործման վճարներ և մի շարք այլ տեսակի հարկեր և վճարներ: Պետական կամուտների կոմիտեի տրամադրած տեղեկություններով, 2016թ.-ին մետաղական հանքարդյունահանող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները կազմել են 51.1 մլրդ դրամ կամ պետական բյուջեի ընդհանուր եկամուտների 4.4%-ը: 2017թ.-ին մետաղական հանքարդյունաբերող ընկերությունների կողմից պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված հարկերը և վճարները աճել են՝ հասնելով մինչև 87.1 մլրդ դրամ կամ 7.1% [4, էջ 35]:

Պետական բյուջե կատարած հաշվարկված վճարումներով առաջատար ընկերությունն է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, որին բաժին է ընկել մետաղական հանքաքար արդյունահանող ընկերություններից 2016-2017թթ. բոլոր հաշվարկված վճարումների 37.7%-ը: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հաշվարկված վճարումների բաժինը պետական բյուջեի եկամուտներում կազմում է ընդամենը 1.7% կամ 19.4 մլրդ դրամ 2016թ.-ին և 2.7% կամ 32.6 մլրդ դրամ՝ 2017թ.-ին:

Պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների հանրագումարով երկրորդն է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ, որին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերությունների համապատասխանաբար՝ 2016թ. և 2017թ. բոլոր հաշվարկված վճարումների 22.9% և 16.4%: «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ հաշվարկված վճարումները կազմում են 9.4 մլրդ դրամ՝ 2016թ., և 13.5 մլրդ դրամ՝ 2017թ.:

2017թ.-ին պետական բյուջեի նկատմամբ հաշվարկված վճարումների հանրագումարով երրորդն է «Թեղուտ» ՓԲԸ, որին բաժին է ընկնում հանքարդյունաբերական ընկերությունների համապատասխանաբար՝ 2016թ. և 2017թ. բոլոր վճարումների 18.5% և 16.4%, իսկ դրամային արտահայտությամբ՝ 0.9 մլրդ դրամ՝ 2016թ. և 14.3 մլրդ դրամ՝ 2017թ. [4, էջ 33-36]:

2018թ.-ին հանքարդյունահանող խոշոր ընկերություններից 9-ը գտնվել են ՀՀ 1000 խոշոր հարկատուների ցանկում, ապահովելով 1000 խոշոր հարկատուների կողմից վճարված ընդհանուր հարկերի 9%-ը: Ընդ որում, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, լինելով խոշոր հարկատուների ցանկում առաջինը, ապահովել է հանքարդյունահանող ընկերությունների բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 60.3%-ը: 2019թ.-ին նույնպես 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ներկայացված են 9 հանքարդյունահանող ընկերություններ, և ինչպես նախորդ ֆինանսական տարվա ընթացքում, այնպես էլ 2019թ.-ին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը առաջատարն է հարկատուների շարքում, որին բաժին է ընկնում հանքարդյունահանող բոլոր ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի 70.1%-ը (աղյուսակ 1):

Պետք է նկատել, որ ՀՀ-ում խոշոր հարկատուների վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պարբերաբար հրապարակվող տեղեկություններում հանքարդյունահանող ընկերությունների համար հաշվարկված և վճարված ռոյալթիների գումարը չի առանձնացվում առանձին տողով, այդ վճարները ներառված են «այլ հարկեր և վճարներ» բաժնում: Հաշվետու կազմակերպությունների կողմից վճարված ռոյալթիների վերաբերյալ տեղեկությունները հավաքագրվում են Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության զեկույցի պատրաստման շրջանակում և հրապարակվում են այդ զեկույցում: Այս հանգամանքը որոշ չափով դժվարացնում է համեմատությունների կատարումը, թեև գնահատականներ տալու տեսանկյունից կարելի է ռոյալթիների գումարը նույնացնել «այլ հարկեր և վճարներ» բաժնում արտացոլված թվային մեծությունների հետ:

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես աշխարհի շատ երկրներում, հարկային օրենսդրությամբ առանձին կարգավորում է պետության բնական պաշարների օգտագործումը: Նման հարկերի ընդհանուր անվանումը բնօգտագործման վճար է, որը պետական բյուջե վճարվող հարկ է և կազմում է բյուջետային եկամուտների զգալի մասը: ՀՀ հարկային օրենսգրքով (Հոդված 197) սահմանված է բնօգտագործման վճարի հասկացությունը, որը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է: Բնօգտագործման վճարի տեսակ է ոռոյալթին, որը մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահութաբերության համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է [6, հոդվ. 197]:

Թե՛ նախկինում, թե՛ ներկայումս գործող կարգավորումներով՝ ՀՀ հարկային օրենսգրքով, ոռոյալթի հաշվարկման բազան իրացումից հասույթն է (կամ իրացման շրջանառությունը), որը հաշվարկվում է հարկային օրենսգրքով սահմանված կարգով [6, հոդվ. 202]:

Աղյուսակ 1

Մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների կողմից 2019թ.-ին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի մեծությունը և մասնաբաժինը հանքարդյունահանող ընկերությունների վճարած հարկերի մեջ

Տեղը 1000-ի մեջ	Իրավաբանական անձի անվանումը	2019թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)							
		Ընդամենը մուտքեր	որից		այդ թվում				
			հարկային մարմնի կողմից հավաքա-գրված	մաքսային մարմնի կողմից հավաքա-գրված	շահութահարկ	եկամտա-յին հարկ	ԱԱՀ	անցիզային հարկ	այլ հարկեր և վճարներ
1	2	3	4	5	6	7	8	9	10
	Ընդամենը 1000 խոշոր հարկ վճարողները	1,061,188,702	826,433,714	234,754,988	169,566,110	208,158,186	455,535,036	114,748,956	139,789,237
	Ընդամենը հանքարդյունահանող ընկերությունները	73,300,019	67,313,431	5,986,588	27,061,666	18,722,895	7,315,951	260,659	37,729,703
	%-ով ընդամենը 1000 խոշոր հարկ վճարողների մեջ	6.9	8.1	2.6	16.0	9.0	1.6	0.2	27.0
2	Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ	51,360,135	49,136,275	2,223,860	16,960,209	9,867,355	2,072,152	85,145	24,642,885
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	70.1	73.0	37.1	62.7	52.7	28.3	32.7	65.3

1	2	3	4	5	6	7	8	9	10
9	Գեոպրոմայնինգ Գոլդ	13,665,344	11,970,013	1,695,331	7,138,331	3,511,710	2,258,954	118,379	8,120,409
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	18.6	17.8	28.3	26.4	18.8	30.9	45.4	21.5
66	ՉԱԱՐԱՏ Կապան	2,857,332	2,322,905	534,427	1,212,110	1,538,333	1,088,996	35,258	1,867,087
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	3.9	3.5	8.9	4.5	8.2	14.9	13.5	4.9
100	Թեղուտ	2,000,355	1,368,405	631,950	1,178,668	1,357,546	533,098	95	322,886
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	2.7	2.0	10.6	4.4	7.3	7.3	0.0	0.9
109	Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ	1,798,276	1,343,603	454,673	74,441	1,310,731	753,828	21,706	1,917,025
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	2.5	2.0	7.6	0.3	7.0	10.3	8.3	5.1
393	Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ	460,351	418,684	41,667	16,688	405,859	44,559	0	531,120
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	0.6	0.6	0.7	0.1	2.2	0.6	-	1.4
408	Արմենիա մոլիբդեն փրոդաքշն	443,084	443,084	-	160,792	528	259,874	0	563
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	0.6	0.7	-	0.6	0.0	3.6	-	0.0
444	Լիդիան Արմենիա	407,362	12,842	394,520	320,427	533,707	299,308	76	119,455
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	0.6	0.0	6.6	1.2	2.9	4.1	0.0	0.3
561	Մեղրաձոր Գոլդ	307,781	297,621	10,160	0	197,127	5,182	0	208,273
	%-ով ընդամենը հանքարդյունահանողների մեջ	0.4	0.4	0.2	-	1.1	0.1	-	0.6

Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հրապարակած՝ 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից տարվա ընթացքում վճարված հարկերի մեծությունների հիման վրա: Ցանկը կարելի է ներբեռնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքից, էլեկտրոնային ռեսուրսի հղումը՝ <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>

Ինչպես «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ հետագայում՝ 2016 թ.-ի հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանվեց հանքարդյունաբերության ոլորտում ռոյալթիների հաշվարկման միևնույն բանաձևը: Տնտեսության այս ոլորտում հաշվարկվող ռոյալթիները

հիմնվում են աճողական սանդղակի վրա, որի նվազագույն մակարդակը հավասար է շահութաբերության չորս տոկոսին, իսկ առավելագույն մակարդակ սահմանված չէ: Ռոյալթիի համար սահմանվում է ռոյալթիի բազայի նկատմամբ արժեքային (տոկոսային) դրույքաչափ, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$R = 4 + [C / (L \times 8)] \times 100$$

որտեղ՝

R - ն՝ ռոյալթիի դրույքաչափն է՝ տոկոսով.

C - ն՝ շահույթը նախքան հարկումը՝ դրամով, որը հաշվարկվում է որպես ռոյալթիի բազայի և << հարկային օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական գործունեության գծով ծախսերի, վերը նշված բանաձևով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն.

< - ն՝ ռոյալթիի բազան է՝ դրամով [6, հոդվ. 209]:

Նշենք նաև, որ նախքան հարկումը շահույթի հաշվարկման ժամանակ իրացման շրջանառությունից ֆինանսական գործունեության գծով ծախսերի, սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների նվազեցումը չի կատարվում՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ծախսերն ու հարկային վնասները հանքավայրերի շահագործման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության հետ կապված են, թե ոչ:

Համեմատած բազմաթիվ այլ հանքարդյունաբերող երկրների հետ՝ <<-ում ռոյալթիի հաշվարկման համակարգը փոքր-ինչ բարդ է, քանի որ ներառում է շահութաբերության բաղադրիչը: Օրինակ՝ հասարակ ռոյալթին, որը կիրառվում է միայն որպես եկամուտների նկատմամբ տոկոս, ավելի հեշտ է կառավարել, մինչդեռ շահութաբերության փոփոխականի վրա հիմնված բաղադրիչ ունեցող ռոյալթիները պահանջում են ավելի մանրամասն վերահսկողություն և կարող են վտանգել հարկային եկամուտները շահույթի թերհայտարարման պատճառով (օգտագործելով տրանսֆերային գներ կամ հարկերից խուսափելու որևէ այլ մեթոդ): Հարկ է նշել, որ եթե ռոյալթին նույնիսկ մասամբ հիմնվում է իրացման շրջանառության վրա (օրինակ՝ ինչպես Հայաստանում), ապա դա նշանակում է, որ ռոյալթիները ենթակա են վճարման նույնիսկ այն դեպքում, երբ ընկերության հաշվեգրված շահույթը գրոյական է կամ եթե ընկերությունը վնասով է աշխատում:

Միջազգային պրակտիկայից կարող ենք տեսնել, որ հանքարդյունահանող ընկերությունների արտադրանքը գերազանցապես վաճառում է օֆշորային ընկերություններին, որոնք իրենց հերթին սեփական վերադիրով արտադրանքը վաճառում են վերջնական սպառողներին: Այսպիսով, շահույթի մեծ մասը ձևավորվում է, իսկ ավելի ճիշտ՝ ցույց է տրվում, օֆշորային գոտում գրանցված ընկերությունների կողմից, ինչը նշանակում է, որ արդյունահանող ընկերությունները տվյալ երկրի բյուջե վճարում են զգալիորեն ավելի քիչ հարկեր, քան նախատեսված է երկրի օրենսդրությամբ:

Այնուամենայնիվ, այդպիսի հնարավորության դեմ պայքարելու համար օրենքով նախատեսված է դրույթ, որը վերաբերում է միջազգային գների նկատմամբ 80%-ի չափով սահմանափակմանը: Այսպիսով, հանքարդյունահանող ընկերությունները կարող են հանքանյութ (հանքաքար) վաճառել տվյալ ժամանակահատվածում ձևավորված շուկայական գներից ոչ ավելի, քան 20%-անոց զեղչով: Այդպիսի սահմանափակումների պարագայում ընկերությունները կարող են վնասով աշխատելու գայթակղություն ունենալ՝ իրենց արտադրանքը վաճառելով շուկայական գներից ցածր գներով, դրանով իսկ պետական բյուջե վճարելով ռոյալթիներ նվազագույն 4%-ի չափով: Հայաստանի պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանքահումքային արտադրանքը երկրի արտահանման ընդհանուր ծավալում նշանակալի մաս է կազմում՝ 2014-2019թթ.-ին միջին տարեկան հաշվարկով 28%, որը ԱԱՀ-ով չի հարկվում: Իսկ առանձին տարիների համար պատկերը հետևյալն է՝ 2014թ.-ին 24.9%, 2015թ.-ին՝ 31.1% 2016թ.-ին՝ 26.3%, 2017թ.-ին՝ 30.9%-ը, 2018թ.-ին՝ 26.7%-ը, իսկ 2019թ.-ին՝ 28.1%-ը [7]:

Այսպես, 2019թ.-ին բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է շուրջ 63.7 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 58.3 մլրդ դրամ)՝ կազմելով ընդամենը հարկերի և տուրքերի 4.3%-ը, այն դեպքում երբ հանքարդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների ՀՆԱ-ին մասնակցությունը կազմել է ավելի քան 190.6 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.9%-ը¹, ինչը նշանակում է, որ երկիրը ռոյալթիների գծով ավելի շատ եկամուտներ է ստացել, քան ընկերությունների եկամուտներն են:

Դիտարկելով բնական ռեսուրսերի օգտագործման արդյունքում ստացված ՀՀ պետական բյուջեի եկամուտները վերջին տարվա ընթացքում, արձանագրենք, որ 2019 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 63.7 մլրդ դրամ (առանց անցումային գերավճարի՝ 58.3 մլրդ դրամ) բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար՝ կազմելով հարկերի և տուրքերի 4.3%-ը: Այս դեպքում նախորդ տարվա համեմատ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար մուտքերի աճով, որոնք կազմել են 19.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 109%-ով կամ 10.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ոչ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ծավալների կրկնակի աճով, ինչպես նաև ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների շուրջ 13% աճով:

2019 թ.-ին արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթին կազմել է 37.2 մլրդ դրամ է: Առանց անցումային գերավճարի նշված մուտքը կազմել է 32.5 մլրդ դրամ, որը 17.4%-ով կամ 6.8 մլրդ դրամով զիջել է նախորդ տարվա ցուցանիշը: Մուտքերի նվազումը պայմանավորված է արդյունահանման ծավալների կտրուկ նվազմամբ: Մասնավորապես, եթե ընդհանուր հանքարդյունաբերության ճյուղի ավելացված արժեքը նվազել է 14.2%-ով, ապա ռոյալթիի գծով մուտքերի համար առանցքային նշանակություն ունեցող պղնձի խտանյութերի ֆիզիկական ծավալների անկումը կազմել է 25.9%: Չնայած իրական ծավալների նվազմանը, պղնձի խտանյութի գների 5.9%-ի չափով գնաճը (Լոնդոնի մետաղական բորսայի տվյալների համաձայն՝ պղնձի 2018 թվականի միջին գինը 2018 թվականին կազմել է 6,525 ԱՄՆ դոլար՝ 2017 թվականի 6,163 ԱՄՆ դոլարի համեմատ), որոշակիորեն մեղմել է բացասական ազդեցությունը, սակայն, այնուամենայնիվ, ընդհանուր ազդեցությունը եղել է բացասական [8, էջ 163, 164]:

Պետք է նշել նաև հարքարդյունաբերության ոլորտի ընկերությունների համար հարկային արտոնությունների տրամադրման մասին (ինչը սահմանված է ՀՀ հարկային օրենսգրքի Հոդված 19-ով), երբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքով [9] վճար վճարողներն ազատվեցին սահմանված կարգով հասույթի վերահաշվարկման արդյունքում՝ մինչև 2016 թվականը ներառյալ ընդգրկող հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող ռոյալթիների գծով հաշվարկված տույժերից և տուգանքներից:

Եզրակացություն

1. Ամփոփելով կարող ենք նշել, որ ՀՀ-ում հանքարդյունաբերության ոլորտում զբաղված ընկերությունների համար սահմանված է ռոյալթիներով հարկման բավականին ազատական համակարգ, որը կազմում է ոչ ավելի, քան 6-7%, ինչը բավականին ցածր ցուցանիշ է աշխարհի շատ երկրների համեմատ: Հարկ է նաև նշել, որ այս ոլորտի ընկերությունների արդյունավետ հարկը ՀՀ-ում չի գերազանցում տնտեսության մյուս ոլորտներում գործունեություն ծավալող ընկերությունների վճարած հարկերը:

¹ 2019թ.-ի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալները, ՀՀ ՎԿ, Մամուլի հաղորդագրություն, էջ 1, <https://www.armstat.am/file/doc/99517723.pdf>

2. Հարկային համակարգը ձևավորելիս քաղաքականության մշակողները պետք է կարողանան հաշվարկել և գնահատել այն կուտակային ազդեցությունը, որը կարող են ունենալ կիրառվող հարկերը հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ու սպասվելիք ներդրումների ընդհանուր մակարդակի վրա: Քննարկելով, թե ինչ հարկեր պետք է սահմանվեն հանքարդյունաբերության ոլորտում և ինչպիսի դրույքաչափերով, քաղաքականության մշակողները պետք է ոչ միայն հաշվի առնեն անհատական հարկերի նպատակները, այլև գնահատեն բոլոր հարկերի գումարային ազդեցությունը: Նման տեղեկատվությունը պետք է ներառի յուրաքանչյուր հարկատեսակի կիրառման կարևորությունը՝ կոնկրետ նպատակներին հասնելու համար: Ընդհանուր հարկային համակարգը պետք է արդար լինի ինչպես երկրի, այնպես էլ ներդրողների համար, իսկ տվյալ ապրանքատեսակների միջազգային առևտրում՝ ապահովի դրանց մրցունակությունը:

3. Անհրաժեշտ է կշռադատված մոտեցում ցուցաբերել հետևյալ հարցում. հարկային բարձր բեռ (ներառյալ ոռոգիների բարձր դրույքաչափեր) սահմանել՝ անհապաղ զգալի եկամուտներ ապահովելով բյուջեի համար, թե՞ նախապատվությունը պետք է տալ հանքարդյունաբերության կայուն զարգացմանը, որը երկարաժամկետ հեռանկարում թույլ կտա ապահովել տնտեսական զգալի աճ, ենթակառուցվածքների ստեղծում և տնտեսության բազմազանեցում (դիվերսիֆիկացիա):

4. Ռոյալթիների սահմանման գործում հանքարդյունաբերական ընկերությունները զգալի դերակատարում ունեն, ինչն արտահայտվում է նրանում, որ այդ ընկերությունների դիրքորոշումը հիմնականում հաշվի է առնվում կառավարությունների կողմից: Հենց նրանք կարող են կառավարություններին տրամադրել ոռոգիների քանակական ազդեցության վերաբերյալ գնահատականներ, որոնք վերաբերում են հնարավոր ընդհանուր ներդրումներին, ոչ արդյունավետ հանքավայրերի շահագործման անհնարինությանը, դրանց փակման և փակման հետևանքներին, երկրի հանքահումքային պաշարների փոփոխություններին ու նմանատիպ հարցերին: Նման տեղեկություններին տիրապետող կառավարությունները կկարողանան ավելի հիմնավորված և հանքարդյունաբերական ընկերությունների համար նախընտրելի որոշումներ կայացնել:

5. Մակրոտնտեսական տեսանկյունից, հանքարդյունաբերության ոլորտի գործունեության օպտիմալացման խնդիրը երկարաժամկետ հեռանկարում պետք է լինի այդ ոլորտից ստացվող սոցիալական օգուտների զուտ ներկա արժեքը առավելագույնի հասցնելը, ներառյալ (սակայն չսահմանափակվելով) միայն կառավարության հարկային եկամուտներով: Սա ենթադրում է հավասարակշռություն, քանի որ եթե հարկային բեռը չափազանց բարձր է, ապա կնվազեն ներդրումների ծավալները և հարկման բազան, քանի որ ներդրողները կնախընտրեն այլընտրանքային նախագծերի իրականացումը: Իսկ այն դեպքում, երբ հարկային բեռը չափազանց ցածր է սահմանվում, ապա հանքարդյունահանող երկրները կորցնում են զգալի եկամուտներ, որոնք անհրաժեշտ են բնակչության բարեկեցության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև բազմաթիվ այլ սոցիալ-տնտեսական խնդիրներ լուծելու համար:

Գրականություն

1. Inclusive growth: What is Inclusive growth, OECD, Էլեկտրոնային ռեսուրսի հղումը՝ <http://www.oecd.org/inclusive-growth/#introduction>
2. Մ.Ջենաշի «Հայաստանի հանքարդյունաբերության ֆիսկալ ռեժիմի վերլուծություն», Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն, ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն, 2015թ.: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Էլեկտրոնային ռեսուրսը հասանելի է 01.09.2020թ. դրությամբ <http://mlri.crm.aua.am> հասցեով:

3. James Otto, Craig Andrews, Fred Cawood, Michael Doggett, Pietro Guj, Frank Stermole, John Stermole, and John Tilton "Mining royalties : a global study of their impact on investors, government, and civil society", The World Bank, 2006, 320 pages.
4. «Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) զեկույցը 2016-2017թթ.», EITI Հայաստան, 2018թ., 360 էջ:
5. «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ֆիսկալ ռեժիմը և ֆինանսական հոսքերի թափանցիկության ԱՃԹՆ-ի պահանջները» խորագրով դասընթաց, մարտի 6-8, 2020թ., Դիլիջան: Հղումը՝
<https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/03/09/eiti-fiscal-regime-training-6-8-march-2020/82/>
6. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք», ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թ.-ի հոկտեմբերի 4-ին: Փոփոխություններով և լրացումներով տարբերակը՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ www.arlis.am կայքում:
7. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքում՝ www.armstat.am–ում տեղադրված տվյալներ:
8. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն, ՀՀ ֆինանսների նախարարության պետական բյուջեի հաշվետվությունների հատվածում, հղումը՝
http://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/
9. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի մարտի 1-ին, ՀՕ-78-Ն:

UDC - 336.201:338.012

CURRENT PROBLEMS OF TAXATION IN THE MINING INDUSTRY

Z.Sh. Mkrtchyan

National Polytechnic University of Armenia

For the socio-economic development of the Republic of Armenia, both at this stage and in the future, the natural resources of the republic and those minerals that are exported to the world market at international prices and have a high price are of particular importance. As the study of the economic indicators of the activities of many subsoil users in developing countries, as well as the Republic of Armenia, shows, there are a number of problems that one way or another prevents the fair distribution of added value in this area. These problems related to the distribution of mining revenues between the owner of the subsoil (the state), enterprises engaged in the extraction of minerals and companies that sell mining products on the world market. It is noteworthy that the state, which is the owner of the subsoil, receives only a small part of the added value in the form of taxes and fees, and a significant part of the mineral rent is appropriated by companies selling mining products (generally abroad).

The author tried to develop proposals regarding the formation of the best balance between the interests of the state and various economic entities engaged in the mining industry.

Key words: mining industry, minerals, raw materials, environmental tax, royalties, payment for nature use, tax collection, state budget.

УДК - 336.201:338.012

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ НАЛОГООБЛОЖЕНИЯ В ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ

З.Ш. Мкртчян

Национальный политехнический университет Армении

Для социально-экономического развития Республики Армения, как на данном этапе, так и в будущем особо важное значение имеют недра республики и те полезные ископаемые, которые экспортируются на мировой рынок по международным ценам и имеют высокую цену. Как показывает исследование экономических показателей деятельности многих недропользователей развивающихся стран, а также Республики Армения, существует ряд проблем, так или иначе препятствующих распределению добавленной стоимости в данной сфере. Эти проблемы касаются распределения доходов от горнодобычи между собственником недр (государством), предприятиями занимающимися добычей полезных ископаемых и компаниями, реализующими продукцию горнодобывающей промышленности на мировом рынке. Примечательно, что государство, являющееся собственником недр, получает лишь небольшую часть добавленной стоимости в виде налогов и сборов, а значительная часть минеральной ренты присваивается компаниями, реализующими продукцию горнодобывающей промышленности (как правило - за рубежом).

Автор попытался разработать предложения, касающиеся формирования наилучшего соотношения между интересами государства и различных хозяйствующих субъектов, занятых в горнодобывающей отрасли.

Ключевые слова: горнодобывающая промышленность, полезные ископаемые, сырье, экологический налог, роялти, плата за природопользование, сбор налогов, государственный бюджет.

Ներկայացվել է՝ 04.12.2020թ.

Գրախոսման է ուղարկվել՝ 04.12.2020թ.

Երաշխավորվել է տպագրության՝ 25.12.2020թ.